

Ա. Քոչոյան

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԶԱՆԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՔՆՆՈՒՅՑՈՒՆԸ

Քրիլիսին XIX դարի 2-րդ կեսին այլևայլ ժողովուրդների, բազմերանգ կուլտուրաների, այլատիպ լեզուների խաչավորման կենտրոն էր հանդիսանում: Ե՛վ վրացական, և՛ հայկական, և՛ պարսկական, և՛ ադրբեջանական, և՛ ռուսական, և՛ արևմտասլավոպական կուլտուրաները շողշողում էին իրենց բազմերանգությունները: Այդ բազմաթիվ ու այլատիպ լեզուների մեջ զոյություն ունենալու նաև Քրիլիսիի հայ բարբառը, որը ինքնուրույն և ինքնատիպ լեզու լինելով հանդերձ անխուսափելիորեն ենթակա է եղել այդ լեզուների խոր ազդեցությունը: Գ. Սունդուկյանը, որը գրել է այդ բարբառով, իր ստեղծագործություններում գրչի մեծ վարպետությունը արտահայտել է Քրիլիսիի բարբառի այն վիճակը, որպեսին եղել է նրա ժամանակ:

Գ. Սունդուկյանի լեզվի բառային կազմը բաղկացած է՝ ա) ընդհանուր հայերեն բառերից, բ) բարբառային բառերից և գ) օտար լեզուներից փոխառյալ բառերից:

Սունդուկյանի լեզվի բառային կազմի մեջ, հայերեն բառերի շարքում կարևոր նշանակություն ունեն դրական լեզվի հետ ընդհանուր եղող հայերեն բառերը, որոնք բարբառում արտասանվում են այնպես, ինչպես գրական լեզվում: Գրականի հետ ընդհանուր եղող հայերեն բառերի թիվը Սունդուկյանի երկերում հասնում է 870-ի¹: Այս խմբի բառերը կարելի է բաժանել երկու կարգի. 1) բառեր, որոնք Քրիլիսիի բարբառում և Սունդուկյանի երկերում միշտ և բոլոր դեպքերում գործածվել են անփոփոխ գրականի հետ ընդհանուր ձևով (ինչպես հաց, ջուր, տուն, ծառ, քար, սար, գարուն, ամառ, աշուն, ձմեռ և այլն) և 2) բառեր, որոնք գործածվել են և՛ բարբառային, և՛ գրական ձևով: Օր. ախշիկ—աղջիկ, ախկատ—աղքատ, արէգագ—արեգակ և այլն: Իրություն այս երկվությունը, անշուշտ, դրական լեզվի ազդեցության հետևանքն է:

Հայերեն բարբառային բառերի ու ոճերի թիվը Սունդուկյանի երկերում հասնում է 2950-ի: Այս թվի մեջ մտնում են նաև ընդհանուր հայերենի և գրարարի այնպիսի բառեր, որոնք ենթարկվելով հնչյունաբանական և ձևաբանական փոփոխության՝ բարբառային երանգ են ստացել: Օր. այաղ—ահեղ, անիղ—աղեղ, անգըսկածի—հանկարծակի, խուղ—հող, հուրս—որս, հուսնուրդ—որսորդ, դուղ—ուղեղ, զունդ—եղունգ, ննգիր—ընկեր և այլն:

Սունդուկյանի բարբառային բառերի շարքում առանձին նետաքրքրություն են ներկայացնում մոտ 80-ի հասնող այնպիսի բառեր, որոնք միայն Քրիլիսիի բարբառին են յուրահատուկ: Այդ բառերից մի մասը (35 բառ) ստուգաբանված է Աճառյանի Հայերեն գավառական բառարանում: Այս խմբին

¹ Մենք նկատի ենք ունեցել միայն Սունդուկյանի բարբառով գրված գործերը, բացառելով գրական լեզվով գրած միակ գործը՝ «Ամուսինները»:

աստիճանող մի շարք բառեր, ինչպես բըշլըվիլ—գետինն անցնել (անեծք), բըշտուր (խառնիրբշտուր կապակցություն) —խառն, անկարգ, բոկիլ,՝ զիղջ, ճարապատիկ —հարկ պատիլ, ճիճիճի գալ —խիստ ջղախնայալ, մուլափ—համբերել, պետլած—շատ գեղեցիկ, լավ, կարգին, պօսլիլ բառերը գրաբարում գոյություն չունեցող բոլորովին նոր արմատական ձևեր են, որոնք Աճառյանի մոտ նշված են աստղանիշներով²: Մնացած 45 բառերից մեծ մասը մենք գտնում ենք միայն Գեորգ Ասատուրի բառարանում, որը իրեն հավելված գետնոված է Սունդուկյանի Երկրի մեկհատորյակում (1934): Սակայն Գ. Ասատուրի բառարանում տեղ չեն գտել Սունդուկյանի կողմից գործածված բուն Թրիլիսիի բարբառին պատկանող այնպիսի բառեր, ինչպիսիք են արևաշնչիկա գուր չցալը, խոժոռվելը, բասիլեք—թխվածք, գաթա, գամութին — ժամանակ, անդամ, զիշիրուքին — զիշեր, զիշեր ժամանակ, դադամեր—գատափոր, դամրլուքին — թուլամորթություն, խուռնուքին — խորություն, յիփիցութին — որ ժամանակ, կրք և այլն:

Սունդուկյանի երկերում մենք հանդիպում ենք նաև այնպիսի բառակազմությունների, բառակապակցությունների և հարադիր բառերի, որոնք հատուկ են գործչալ միայն Թրիլիսիի բարբառին: Այսպես, օրինակ՝ իրնի մահի—ցմահ, իր ու օտար—ծանոթ-անծանոթ, ճիղ ասիլ—պատմել, ձևնի պտղունց — սակեղնագործություն, մահի վուրթի — մահկանացու, տուն գալ — ներս գալ, ուժամուր—անկոտրում, համառ և այլն:

Սունդուկյանի երկերում Թրիլիսիի բարբառային հատուկ հետաքրքիր ձևերից են նաև ժամանակի վերաբերյալ այնպիսի բառեր, որոնք կազմված են ուՅՅՈւՆ > ույին ածանցով և ունեն տվյալ ժամանակին վերաբերող կամ այդ ժամանակվա համար սահմանված իմաստ: Օր. կսորութին — այսօրվա համար, իրիգնութին — երեկոյան, երեկոյան ժամին, օրութին, տարութին, յիփուցութին և այլն: Եռչն ձևով և ժամանակ արտահայտող իմաստով են կազմված իրիգնահացութին — ընթրիքի ժամանակ, ռարսընքութին — հարսանիքի ժամանակ:

Բարբառային մի քանի բառեր էլ անցել են նրանի բարբառից Արարայան բարբառով խոսող հայկական հատվածի Թրիլիսիի կատարած գաղթի պատճառով և հատուկ են միայն այդ երկու բարբառներին: Սունդուկյանի մոտ այդպիսի բառերի թվին են պատկանում բանհօքի անիլ — տեղնուտեղը սպանել, մեռցնել, գարթնի — բացի, բուղմեկա — թաղման համար կենդանություն ժամանակ պատրաստած փող, իրասածի — կամակոր, համառ, իր խոսքը առաջ տանող, իրավուր — լուրային, հարազատ, իրիգնահաց — ընթրիք, խառնիրբշտուր — խառնափնթոր, մարթացու — փեսացու (ամուսին լինելու թեկնածու), տարակա — տապալ³, ունուլ-բունուլ — մանր երեխաներ, փըտնիլ — պարսավել:

Սունդուկյանի մոտ չուրահատուկ հետաքրքրություն են ներկայացնում նաև Թրիլիսիի բարբառին բնորոշ դարձվածքները, ոճերն ու արտահայտությունները: Ժողովրդական շատ ոճեր, դարձվածքներ ու առածներ, որ գործ է ածել Սունդուկյանը իր երկերում, կիրառվում են նաև մեր արդի գրական

¹ Ուսումնասիրության մեջ հեղինակի գրական տրանսկրիպցիան վեր ենք ածել բարբառային տրանսկրիպցիայի:

² Տե՛ս էմինյան Ազգագրական ժողովածու, հատոր Թ, 1913, էջ 21:

³ Նրանի բարբառում տարակա՝ տապակած ձուկ:

լեզվում և կազմում են մեր աչտօրվա լեզվի արտահայտչական կողմերից մեկը: Այդ արտահայտութուններն ու դարձվածքները մեծ մասամբ կապված են մարդու օրգանների՝ գլխի, ձեռքի, ոտքի, աչքերի, ականջի, բերանի, լեզվի, սրտի հետ, ինչպես նաև բնական այլ մարմինների ու երևութիւնների՝ ջրի, գետնի, կայծակի հետ:

Սունդուկյանի մոտ կիրառվող Թրիլիսիի բարբառին հատուկ ոճերից կարելի է թվարկել անգանը բաղմընչու անիլ—չլսելու ձևանալ, բողազը դուրս կտրիլ—մեկին խիստ ծանր վիճակի հասցնել, զլուխը հիդը դրած ունեցալ—մեկի համար կյանքը զոհարեցել, զնա ու զնա—լավ է, հիանալի է, զելեկիկիօ, զելեկիկիօ—անսիրտ, միշտ նույնը, Թերգի ջուրը խմած—Ռուսաստանում կրթութուն ստացած և հայրենիք վերադարձած երիտասարդի մասին (Թեքեք գետի անունից), իրան տվեք տասչուրս շային—առարկության՝ անհամաձայնության արտահայտութուն, Լեցրեմուրի ժած գալ—դուրս, հափշտակել, կողոպտել, ինչպես Լենկթեմուրը և այլն:

Սունդուկյանը իր երկերում լայն տեղ է տվել նաև ժողովրդական առածներին ու ասացվածքներին, որոնք իրենց բնութիւնով շատ բազմազան են և ցույց են տալիս իր ժամանակի հասարակական կյանքի նկատմամբ տարբեր դասակարգերի սենեցած վերաբերմունքն ու ըմբռնողութունը: Այսպես, օրինակ, բուրժուական իրավակարգում գոյութուն ունեցող անհավասարութունն ու անարդարութունն ընդգծված են այսպիսի ասացվածքներով. «Կուշտը քաղցածին ինչ է հարցնում», «Խըղճի հացը էժան չի ճարվում», «Ախլատ տ հրմպարտ վուր կա էս է», «Աստուծ մանանա խօ չէ դէվէր դրգոմ միդ համա», «Ախ աստուծ, վախ աստուծ, վուրին կու տաս սէլօվ փէտ, վուրին չիս տա ցախ, աստուծ և այլն: Աղքատ և բարվոք կյանքի մասին ասվում է. «Ապրիլ կա էրկաթ է, ապրիլ կա էրծաթ է»: Ամուսնության, աղջիկ մարդու տալու մասին ընդունված է ասել «Ախչկա զօլիւն ու էդէգէցի շինիլը մեկ է» կամ «Նըշնելու ախչիկը վուր կա անկտրիլ ձմէրուկ է, ինչ բախտը կուտա, կու տա»: Անուան, չաշխատող մարդու մասին իրոնիայով ասվում է՝ «Սրա տէրն էլ կօսէ, թե նախրումը էշ ունիմ»: Աղքատիկ ապրուստ ունեցող, բայց և մաքուր ու սրտաբաց մարդու մասին ասվում է՝ «Սուխ ու հաց, սիրտը բաց»: Փողի՝ որպես ամենազոր միջոցի մասին ասված է՝ «Ամեն ցավի դիդը փուղն է»: Խրատական ասացվածքներ են՝ «Տասը ջէր չափէ, մէ ջէր ձէվէ», «Մարթ իր լհէրի գօրա կու ձքէ վուտը», «Ինչ կու ցանիս, էն կու հնձիս և այլն:

Սունդուկյանի գործածած որոշ ասացվածքներ զրեթե բառացի ասվում են նաև Անդրկովկասյան մյուս ժողովուրդների մեջ: Օր. «Աղվեսն իր պոչը բերեց վկա», «Կաշառքը դժոխքը կուսավորի», «Գողն ինչ կուզի՝ մութ դիշեր» և այլն:

Բարբառով զրեթով հանդերձ Սունդուկյանը իր լեզվի մեջ ներմուծել է բազմաթիվ գրական ձևեր, մեծ մասամբ ութին (ության) գոյականակերտ անանցով բառեր, օր. լուսավորութիւն, հավատարմութիւն, մարթասիրութիւն, ճշմարտութիւն, արժանավորութիւն և այլն: Իլ խոնարհիչով բայեր, որոնք ընդհանուր են գրական լեզվի հետ՝ ավանդիլ, բազմացնիլ, կողոպտիլ, փառաբանիլ և այլն:

Գրական լեզուն դպրոցի, գիր ու գրականության, մամուլի միջոցով Սունդուկյանի օրոք արդեն մեծ նվաճումներ էր կատարել բարբառով խոսող

ժողովրդի մեջ: Որ գրական լեզվի որոշ բառեր ու դարձվածքներ անհրաժեշտ են եղել Սունդուկյանի ստեղծագործությունների համար, այդ ակնառու երևում է հենց զրոյի խոսքերից, որ նա գրել է Մոլիերի «Ժորժ Դանդեն կամ Շիոթիված ամուսինը» կատակերգության հայերեն հրատարակության առաջաբանում: «Ով լավ ծանոթ է Թիֆլիզի բարբառին, նա կխոստովանի, որ այդ բարբառը մեծ հարմարություններ ունի Մոլիերի սուր երգիծարանություններն արտահայտելու, թեև նրան տեղ-տեղ պակասում են դարձվածքներ և բառեր, որոնց ստիպված էի փոխ առնել գրական լեզվից»¹: Այս թարգմանության մեջ և նրա մյուս բարբառային գործերում մենք հանդիպում ենք գրական այսպիսի բառերի՝ անսահման, կամա-ակամա, հանցանք, հարգանք, հարևանցի, պայատական, այցետոմս, անարատ, ապաստարան, արտասահման, ներհակ, արբանյակ, արձագանք, հայրենիք, ջերմեռանդ, պատվանդան և այլն:

Սունդուկյանի լեզվի մեջ զգալի տեղ են գտել նաև գրաբարյան բառեր, ոճեր ու արտահայտություններ, որոնք գործածվում են խոսքին արտահայտիչ և երբեմն էլ հանդիսավոր բնույթ տալու համար, և բխում են կյանքի ճանաչողության վերաբերյալ Սունդուկյանի այս կամ այն հերոսի ունեցած հասկացողությունից կամ կրոնա-բարոյական պատկերացումներից: Երաբարյան այդ արտահայտությունները ենթարկվել են փոփոխության ըստ բարբառի լեզվական ըմբռնողության: Օրինակ՝ «Սաթարալա»-ի մեջ Ջամբախովը իր կեղծիքներն ու խաբեբայությունները փխլիսոփայորեն հիմնավորելու համար իր բարբառով ասում է Սաղմոսի հետևյալ խոսքերը. «Յիս ասացի ի զարմանալի իմում, թէ ամենայն մարթ սուտ է, կօսէ» (զրաբարում՝ «ես ասացի ի զարմանալ իմ, թէ ամենայն մարդ սուտ է»): Մասիսյանցին այցելելիս Ջամբախովն ասում է ավետարանի հետևյալ խոսքերը. «Եվ օվ իր անձը կու խօնարհէցնէ, ասում է, նա բարձրացուցանէ իր հօքին, կօսէ» (զրաբարում՝ «ես որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրացցի») և այլն:

Սունդուկյանի երկերում կան նաև գրաբարյան և կրոնական երանգավորումով բառեր՝ աչահամփուր, վարքապիտ, առայսուրթ, անրիծք, մեղեթի, փիլօն և այլն: Երաբարում գործածվող գրաբարյան ձևեր են նաև զամ (անգամ, ժամանակ), զոր, տարեստարի, անգրսկածի—հանկարծակի, ընդեմ—ընդդեմ, մարքանալ և այլն:

Սունդուկյանի երկերում ուշագրավ ձևեր են երի—բերեց, եղի—գրեց, էթօղ—թողեց և երիտ տվեց անցյալ կատարյալի առաջին դեմքով խոնարհված բառերը, որոնք կապվում են գրաբար լեզվի հետ: Այս բառերին հանդիպում ենք հետևյալ կարգի նախադասություններում. «Միտն խաբար էրի», «Իր անումը Շուրա էրի», «Փախավ ու էթօղ ինձ», «էա մատնիքը քիզ ո՞ւր էրիտ»:

Երաբարյան բառեր ու ձևեր են գործածում նաև գրական լեզվով խոսող տիպերը: «Սաթարալա»-ի, «Էլի մեկ զոհ»-ի, «Եվայլն»-ի մեջ Մասիսյանցի, Միքայելի և Եվայլնի բերանով հաճախ ենք լսում սորա, դորա, նորա, կերպիվ, մեծ ով ուրախությամբ, բազում, արհ ոմարհանօք, ի սրտե, փոքր ի շաան, մեռանիլ, կորուսանիլ և նման կարգի բազմաթիվ բառեր:

¹ Գ. Սունդուկյան, երկերի լիակատար ժողովածու մեկ հատորով, Երևան, 1934, էջ 512:

Սունդուկյանի երկերի լեզուն հարուստ է նաև օտար բառերով, որոնք արդյունք են պատմական տարրեր շրջաններում օտար տիրապետություններից կրած ազդեցությունների կամ հարևան ժողովուրդների հետ ունեցած դարավոր ազդակցական սերտ կապերի:

Օտար բառերի կամ լեզվական փոխազդեցությունների խնդրում պետք է նկատի ունենալ հետևյալը: Եթե որոշ դեպքերում ժողովուրդների շփումն արտահայտվել է նվաճման հողի վրա (մեր իրականություն մեջ այդ արտահայտվել է հանձին պարսիկների, արաբների և թուրքերի), ուրիշ դեպքերում էլ դա արտահայտվել է բարի դրացիական և բարեկամական հարաբերություններում: Երկարատև բարեկամական հարաբերությունների հիման վրա անդի են ունեցել նաև լեզվական փոխազդեցություններ: Օր. հայերը վրացիներից և վրացիները հայերից բաղմաթիվ բառեր են փոխ առել, որոնք ոչ թե խաչավորումների ու ասիմիլյատորական քաղաքականության հետևանք են, այլ դարավոր հարևանության ու բարեկամության: Այս կարգին է պատկանում նաև ռուսերենի ազդեցությունը:

Իարբառի մեջ օտար ազդեցություններն առանձնապես ուժեղ կերպով արտահայտվել են արաբերենի, պարսկերենի գծով, որոնք մեծ մասամբ միջնորդաբար անցել են բարբառի մեջ ազրբեջաներենի միջոցով, ապա վրացերենն ու ազրբեջաներենը, իսկ Անդրկովկասը Ռուսաստանին միանալուց հետո՝ նաև ռուսերենը: Այդ ազդեցությունները ավելի ցայտուն կերպով արտահայտվել են «Համալի և Հադիդի մասլահաթներում»:

1882 թ. «Արձագանք» (№ 1) թերթում տպված իր «Հադիդի մասլահաթները» առաջին հոդվածում թբիլիսահայ լեզվի մասին Սունդուկյանը գրում է. «Մի ամէն մէ տաս խօսկումը ութը մի խօսկը չէ: Փարսէրէնը, թուրքէրէնն ու վրացէրէնը դէնը թողած, վուր օվ գիդէ լիփուցվան դէսն է խառնի բըշտուր ընէցնում ինք մի ասա կօւէլումը: Լիկալնինք նուրէնուր սօվօրած խօսկիրը՝ ստօլ, սկամի, ստաքան, սալիէթ, դրաֆին, սուփօլնիկ, սուլզնիկ, կրավատ, ումիվալնիկ ու տաս էրկու հազար էս հանգի խօսկիր դիփ մէտի անգիր ինք արի» (394—2):

Սունդուկյանի երկերում զգալի տեղ են բռնում նաև կվրոպական, մասնավորապես ֆրանսերեն բառերը, որոնք սովորաբար անցել են ռուսերենի միջոցով: Օրինակ՝ արոնիմենտ, բալ, դեպեշ, լաքիա, մասկարադ, մեբիլ, սալոն, ֆրատ և այլն:

Այդ բաղմաթիվ օտար բառերով հանդերձ թբիլիսի բարբառը պահպանեց իր ինքնուրույնությունը շնորհիվ իր բառային հիմնական ֆոնդի և քերականական կառուցվածքի:

Համառոտակի բնութագրենք լուրաքանչլուր լեզվից փոխ առած բառերը:

Վրացերեն բառեր—թբիլիսի բարբառում և Սունդուկյանի երկերում օտար բառերից առանձին հետաքրքրություն են ներկայացնում վրացերեն բառերն ու արտահայտությունները, որոնք այդ բարբառի ամենաբնորոշ ու ինքնատիպ կողմն են հանդիսանում:

Սունդուկյանի երկերում գործածված է վրացերեն մոտ 300 բառ: Այդ բառերը կարելի է բաժանել երկու տիպի:

¹ Տե՛ս պրոֆ. էդ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, 1952, էջ 498:

ա) Բառեր, որոնք նույնությամբ, առանց փոփոխություն, օգտագործվում են թրիլիսիի բարբառում, օր. արլարուզա, բլումա, զոզրա, զրո, ծղարո, կուբո, մեղվինե և այլն:

բ) Բառեր, որոնք հայկական երանգով են օգտագործվում լեզվի մեջ, ինչպես անդերձ, քավաղ, իրամուլ, կուրտղել, ճիանուր, փոթուլ, քրթամ և այլն: Այս բառերը թեև վրացերեն են, բայց զրկվել են վրացերենին հատուկ վերծավորությունից: Վրացերենում ասվում է անդերձի, թավաղի, խրամուլի, կուրտղելի և այլն: Հետևաբար կարելի է ասել, որ այս տիպի բառերին թրիլիսեցիք տվել են հայկական եբանդ:

Բացի վերոհիշյալ վրացական պատրաստի բառերից, թրիլիսիի բարբառում և Սունդուկյանի երկերում մենք հանդիպում ենք նաև այնպիսի բառերի, որոնք կազմվել են վրացերեն և հայերեն արմատների կամ ածանցների, մասնիկների հարադրությունով: Այդպիսի բառեր վրացերենում չկան և հատուկ են միայն թրիլիսիի բարբառին. օր. հայերեն բաղնիս բառից կազմվել է մեբաղնիսերա բառը որտեղ «մերաղնիսերա» արտահայտությունը, որ նշանակում է իմ ինչ բաղնիս գնալու ժամանակն է: Վրաց. մամա—հայր և հայ. պապ բառերից կազմվել է մամա-պապեուլի—պապական, հորական, վաղեմի նշանակությունը բառը: Հայ. ձեք և վրաց. խիլի—պտուղ բառերից ստեղծվել է ձեթիսխիլի—չիթապտուղ բառը: Թրիլիսիի բարբառի էսդանց, էնդանց բառերից կազմվել են էսդանցօրա կամ էսդանցուրօրա (այստեղ գտնվող ամեն բան) և էնդանցօրա (այնտեղ գտնվող ամեն բան) բառերը, որոնց մեջ վրաց. օրա վերջածանցը հավաքական իմաստ ունի, համապատասխանում է հայ. ություն ածանցին: Վրաց. բառի և հայ. ք հոգն. մասնիկից կազմվել են ցրեմեյիք—արտասուքներ (փխր. աղամանղներ), չայիսմեյիք կամ թեյիսմեյիք—թեյուխաններ, թեյելու գործողությունը:

Վրաց. տուտուցի—հիմար, թեթևուլիկ, ցանցառ նշանակություն ունեցող բառից կազմվել են՝ տուտուցանալ—հիմարանալ, տուտուց-տուտուց—հիմար, հիմարարար ձևերը և այլն:

Հարադրյալ բառեր կազմելիս թրիլիսահայերը, որոշ դեպքերում, կրկին դիմել են վրացերենի օգնությունը: Սունդուկյանի երկերում հանդիպում ենք այնպիսի հարադիր բայերի, երբ վրացական բային ավելացնելով անիլ (անել) քայլը, կազմվում է ներգործ. սևոի բայ, իսկ ավելացնելով ըլիլ բայը, կազմվում է կրավորականը: Այսպես, օրինակ՝ մօշլա անիլ—ջնջել, ոչնչացնել: «Բարաթըս իս տու ու քու բիրթը մօշլա անիմ» (160—2)¹, մօշլա ըլիլ—ջնջվել, լուծվել, քանդվել: «Հիմի դուդիս դիփ մէտի մօշլա ըլի բանը» (23—2): Վրացերենի բոլոր այն անորոշ բայերը, որոնք մտել են թրիլիսիի բարբառում և Սունդուկյանի երկերում, գործ են ածվել սովորական անիլ, ըլիլ, տալ և այլ բառերի հարադրությամբ, որովհետև վրացերեն բառի բաղական ձևը չի գիտակցվել թրիլիսահայերի մոտ: Այսպիսով ստացվել են կրկնակի բաղական ձևեր: Օր. վրց. գաշլա նշանակում է փռել, բացել, իսկ գաշլա անիլ—փռել անել, գաշլա—խսնգարել, արգելել, դաշլա անիլ—արգելել անել և այլն: «Տախտի վրա սուփրէն դաշլա կօնէինք» (172—2), «Յիս գնամ, գաշլա չանիմ ձիզ» (85—2):

¹ Բոլոր օրինակները բերված են Գ. Սունդուկյանի «Երկերի լիակատար ժողովածու» մեկ հատորով զբաղից, Սրբան, Պետհրատ, 1934:

Հարագիր բայեր կազմվում են նաև վրաց. գոյական անունների և հայերեն որևէ բայի հարագրությունով: Օր. կուհին արաքիլ—փորը պայթել, բարկությունը հազիվ զսպել, կուճու բերանը կապվիլ—փորկապ ընկնել, կուղին օվալ—կանխազգալ, գուշակել, գլխի ընկնել և այլն:

Ընտանեկան և ազգակցական կապեր ցույց տվող հայերեն բառերին՝ հայր, մայր, հարս, հորեղբայր, հորաքույր, մորաքույր և այլն փոխարինել են վրացերեն բառերը՝ մամա (մամի)—հայր, դեդ ա (դէդի)—մայր, ձալօ—հարս, ձիա—քեռի, սաաիղա—հորաքույր, դեդիղա—մորաքույր և այլն:

Ածականի համեմատական աստիճան կազմելիս թբիլիսահայերը գիմել են կրկին վրացերենի օգնություն՝ վերցնելով ուփրօ—ավելի բառը: Օր. Եվադուցվան մարթիքը ուփրօ խէլօք ու արթար էին» (16—1):

Վրացերենի զգալի ազդեցություն է նկատվում նաև թվականների մեջ: Վլ. աց. և հայ. քանակական թվականների կազմության մեջ գոյություն ունի որոշակի տարբերություն: Հայերեն թվականները հարում են տասնորդական սիստեմին, իսկ վրաց. թվականները՝ քսանորդականին: Թբիլիսիի բարբառում փոխանակ ասելու վաթսուն՝ վրաց. անալոգիայով ասվում է յիրիքսան. «Յիրիքսան տարէկան ավէլ կուլի» (27—1), իննսունվեցի փոխարեն ասվում է չուրսքսան ու տասն վից. «Չուրս քսան ու տասն ու վից տարէկան իմ» (279—2):

Շատ ուշագրավ է նաև այն, որ վրացերեն մի քանի մակրայններ ու շաղկապներ Սունդուկյանի երկերում օգտագործվում են նույնությամբ, առանց որևէ փոփոխության: Օր. ջեր—դեռ, խան—երբեմն, խանդիխան—մերթ ընդ մերթ, մագրամ—սակայն, մայինց—բայց և այնպէս. բարեմց—գոնէ, գանա—միթե, ձիլիլ—հազիվ, եգերա—գուցե, երեի, կի—իսկ, դիալս—այո, ան—կամ և այլն:

Սունդուկյանի երկերում հանդիպում ենք նաև վրացերեն ամբողջական արտահայտությունների: Օր. «—Վո՞ւնց իս:—Ի՛հ, վաչանալէր, վուրթի» (մի կերպ ապրում եմ. քաշ եմ գալիս), «Արա, վի՞ս էկադրէրա» (հապա, ո՞ւմ վալել է), «Շէնի ճիրի մէ» կամ «Ճիրի մէ շէնի» (ցավդ տանեմ), «Գէնացվալօս սուլշի» (հոգուդ մեռնեմ) և այլն:

Սունդուկյանի երկերում տեղ են գտել վրացերեն շատ առածներ ու ասացվածքներ: Նա իր կատակերգությունները տեղ-տեղ համեմել է նաև վրացական ժողովրդական կենսախիճի և զվարթ երգերով:

Վրացիներն էլ իրենց հերթին մի շարք բառեր փոխ են առել հայերենից: Սունդուկյանի երկերից վրացերեն բառերն առանձնացնելիս մենք հանդիպել ենք մի խումբ, որոնց ստուգաբանությունը ցույց է տալիս, որ դրանք հայերենից անցած բառեր են: Այսպես, օրինակ՝ գեյաքնուրի «գեղարքունի» բառը հայերենից վրացերենին է անցել գէլաքնուրի ձևով, հետո Թբիլիսիի բարբառը նորից ետ է վերցրել: Դրօշ ա—գրոշակ ծագումով պահլավերեն բառ է և հնագույն փոխառություն հայերենում, վրացերենին անցել է հայերենի միջոցով: Կեւի—մահակ, հայերեն «կետ» բառն է: Կօլօփի—արկղիկ, տոփ բառը ըստ Չուբինովի՝ հայերեն «կողով» բառն է, իսկ ըստ Աճառյանի՝ ասորերեն բառ է, որը հայերենից անցնելով վրաց լեզվին, Թբիլիսիի բար-

1 Տե՛ս Դ. Чубинов. Грузинско-русско-французский словарь, С. Петербург, 1840.

2 Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արձատական բառարան՝ «Կոզով» բառը:

բառը նորից ետ է վերցրել: Կօճի—վեզ, ճան հայերեն լեզու բառն է, որից կազմվել են կոշկոճել (ջարդել, կտորել), կոճղեզ, կոճակ բառերը: Նուշալարի հայերեն շշուրջպարս բառն է (տե՛ս Հր. Աճառյան, Արմատական բառարան):

Սունդուկյանի երկերի վրացերեն բառացանկում կան բառեր էլ, որոնք հայերեն փոխառություններ չեն, այլ ընդհանրություններ են և մտել են հայոց ու վրաց լեզուներում երրորդ լեզվի միջոցով: Օր. ծրե—սծիր, զամբիլի—զամբյուղ և այլն: ՄԾիր բառը խաղերենից է մտել հայոց և վրաց լեզուներում (վրացերենում ծրե ձևով), իսկ «զամբյուղը» պարսկերենից: «Զամբյուղը» մենք վերցրել ենք որոշ հնչյունափոխությամբ, իսկ վրացերենը վերցրել է նույնությամբ՝ զամբիլի ձևով:

Պարսկերեն բառեր—Թրիլիսիի բարբառը մեր մյուս բարբառների նման շատ ուժեղ ենթարկվել է պարսկերենի ազդեցությանը և զգալի թվով պարսկերեն փոխառություններ ունի: Երանցից մեծ մասը ուշ շրջանում բարբառի մեջ մտել է Աղբրեջանի միջնորդությամբ:

Փ. Սունդուկյանի երկերում տեղ են գտել մոտ 280 պարսկերեն բառեր: Պարսկերենի դոյական անուններն ու ածականները համարյա նույնությամբ մտել են բարբառում, միայն երբեմն բառավերջում ենթարկվել են որոշ հնչյունափոխության, օր. բարբառում, անդազա, պարսկ. Էնդազ, բահամ-բեհամ և այլն: Թրիլիսիի բարբառում պարսկերեն ածականին միանալով հայ. ուրյուն > ուրին ածանցք, կազմվում են նոր դոյական անուններ: Օր. բեյալ ուրին (անկրթություն), բեղնամ-ուրին (խայտառակություն), բեռայ-ուրին (անամոթություն), բեձաք-ուրին (ապիկարություն) և այլն:

Թրիլիսիի բարբառում և Սունդուկյանի երկերում պարսկերեն բառերով բաշխված կազմվում են հետևյալ կերպ՝ 1) պարսկերեն բայական ձևին ավելանում է հայերեն անորոշ բայի իլ վերջավորությունը (բայ որում պարսկերեն արմատական բառի ձայնավորը սղվում է կամ փոխարինվում է սրածայնավորով), օր. քրաշիլ, մըհրիլ, մուրաքրիլ և այլն: 2) Հարադիր ձևով՝ պարսկերեն բառի և հայերեն օժանդակ բայի՝ անիլ, գալ, տալ, բերիլ և այլ բառերի օգնությամբ: Օր. բեղամաղ անիլ—վերավորել, բեղնամ անիլ—վարկարեկել, բահամ գալ—սերել, ստեղծել, դաստուր տալ—թուլլատրել և այլն: Նույնիսկ պարսկերեն բայական կազմությամբ բառը բարբառում չի գիտակցվում որպես բայ և հանդես է գալիս անպայման հայերենի միջնորդությամբ: Օր. ռաստ—հանդիպել, բայց կիրառվում է միայն օժանդակ բայի օգնությամբ ռաստ գալ ձևով:

Պարսկերեն չթեքվող խոսքի մասերը գլխավորապես մակբայական բառեր են, որոնք նույնությամբ կիրառվում են Սունդուկյանի լեզվում: Օր. չարա-բեչարա—ճարահատալ, չուցքի—որովհետև, չուստ—շուտ և այլն:

Արարերեն բառեր—Սունդուկյանի երկերի մեջ գործածված արարերեն բառերի մեծագույն մասը բարբառի մեջ է մտել ոչ թե անմիջականորեն բուն աղբյուրից, այլ միջնորդաբար՝ պարսկերենի և աղբրեջաներենի միջոցով:

Սունդուկյանի երկերում կա արարել են 437 բառ:

Արարերեն գոյական անունների և ածականների մեծ մասը նույնությամբ մուտք է գործել բարբառում: Հաճախ արարերեն և հայ. ուրին վերջածանցով կազմվում են նոր բառեր նույն իմաստով կամ իմաստային որոշ տարբերակումներով: Օր. խալար—լուր, տեղեկություն: Խարարուրին—տեղակություն, մի բանին տեղյակ լինելը. Վեհանի խարարություն չէր ունենա՞մ:

(135—1), թամահ—մի բանի աչք տնկելը, որից թամահութին—աղահու-
թլուն. «էս դադա էլ փուղի թամահութին» (36—1): Հայ. ան նախածանցով
անթամահ, անթամահութին և այլն:

Բայերը և բայական դարձվածքները կազմվում են հարադիր ձևով արա-
բերեն բառի և հայերեն բառի վերջավորությամբ կամ բայի օդնությունով: Օր.
թամ միլ, խաթըրջամանալ—վստահ լինել, խաթըրջամացնիլ—վստահեցնել,
հանգստացնել, խերլիլ—օգուտ քաղել, օգտվել, թարիփ անիլ—մեծարել, դո-
վլլ, պատմել, իիյալ տանիլ—կասկածել, տարակուսել և այլն:

Աղբրեջաներեն բառեր—Սունդուկյանի երկերում տեղ են գտել աղբրե-
ջաներեն 249 բառ: Աղբրեջաներեն բառերը Թբիլիսիի բարբառում, ինչպես և
մեր մյուս բարբառներում ենթարկվում են հայերենի քերականական օրենք-
ներին, հոլովվում, խոնարհվում են ինչպես հայերեն բառեր: Ստանում են որո-
շիչ ու ստացա՛յան հոգեր, էր, նիր, էք և այլն հոգնակի մասնիկներ: Բառա-
կրկնությամբ աղբրեջաներեն բառերից կազմվում են նոր բառակապակցություն-
ներ: Օր. ալան-թալան—կողոպուտ, այն-օյին—մանր-մունր, չայիր-չիման—
մարգագետին, օլքա-օլրա—երկր-երկիր և այլն: Հայերեն նախածանցներով և
աղբրեջաներեն բառերի հարադրությամբ կազմվում են նոր բառեր: Օր. ան-
դընջում—անհամբեր, յարալուտ—վիրավոր, սարսաղութին, օյիքբազուքին,
դընջութին և այլն:

Բայական ձևերը կազմվում են աղբրեջ. գոյական անունների ու ածա-
կանների և հայերեն գործողություն ցույց տվող որևէ բառի կամ վերջավո-
րության միջոցով: Օր. բաթմիշ անիլ—ավերել, զարզարամիշ ըլիլ—զարհու-
րել, թօզօտվիլ, դընջանալ և այլն:

Ռուսերեն բառեր— Սունդուկյանի երկերում կա 389 ռուսական փոխ-
առյալ բառ: Այդ բառերն արտահայտում են կյանքի բազմազան բնագավառ-
ներ: Այսպես, օրինակ՝ շկօլ, թրեաթր, զիմնազիա, գազեթ, կուր, սուդ, պօլի-
ցիա, զուբերնատօր, միցիստր և այլն:

Ռուսերեն բառերը հայերեն խոսքի մեջ ենթարկվում են հայերենի քե-
րականական օրենքներին, հոլովվում ու խոնարհվում են ինչպես հայերեն
բառեր, օր. «Սօրբանիումը բարէկամացավ» (86—2), «Բէսէրտի ստօլը հազ-
րիլ է տալի մօղնի ստալալօյումը» (126—2), «Կօսէլիը դրադուսի ունտրափի-
ցար ըլի պախօղեմեն նուր հիդ դառած» (124—1), «Էն փօդրաթը ուպրավ-
լիայուշչևրու ճանգը չգցիմ» (85—2) և այլն:

Ռուսերեն և հայերեն բառերով կազմվում են բաղադրյալ բառեր: Օր
«Տուն էկա, վուր դօկլադ անիմ» (29—1), «Էն փուղիրօվ իմէնէնիցէք սպրա-
վիտ անում» (104—1), «Սօվետ կապեցին ու միաբէրան վճռեցին» (110—1),
ստաքան զցիլ—խմել, կոնծել. «Արի մէ-մէ սաաքան գցինք», (136—2) արի-
ծատ անիլ—նեղացնել (24—1) և այլն:

Ռուսերեն բառերով կազմվում են հայերեն բայական ձևեր: Օր. «Ինչրու
չղնակումանամ, վուտս տուն չիմ դընի» (50—1), «Նուր իս սկուպօյացի»
(170—1):

Ռուսերեն բառերին միանում են հայերեն ածանցները և կազմում են
նոր բառեր, Օր. ակօշկանուց, էտաժանի, չեստնութին: Հայերեն հոգն. մաս-
նիկներով՝ ակօշկեք, զալեք—զահլիճներ, կուեսլեք, պօղրուգեք—ընկերուհի-
ներ, ստուդենտնիդ և այլն:

Ֆրանսերեն բառեր—Սունդուկյանի երկերում տեղ են գտել նաև և՛լրոպական 100-ից ավելի բառեր, զվտավորության ֆրանսերեն լեզվից: Ֆրանսերեն բառերի որոշ մասը (որը անցել է բարբառին ոտուերենի միջոցով) վերաբերում է կենցաղին, հագուստին, արդուզարդին և այլն, ինչպես՝ անտիկ մոյրե, բլոնդ, բուռնուս, դյուպյուր, դրապրի, կամլուս, տյուլե, տյուեհի, տրյումո, օգեկալոն, ֆերմուար, բալ, մաւկարադ, սալոն, բուդուար, լաբիա, ֆրանս և այլ բառեր, որոնք, սակայն, բուն բարբառով խոսող ժողովրդին խորթ են եղել: Ֆրանսերեն բառերն ու արտահայտությունները գործածվել են միայն ունկոր դասակարգի վերնախավերի՝ հալ բուրժուազիայի և առատրական դասի մարդիկ: Բուրժուազիայի վերնախավը խուսափում էր ազգային լեզվի «կուպիտ» արտահայտություններից ու դարձվածքներից և հայերեն խոսքի հետ խառնում էր ֆրանսերեն բառեր ու դարձվածքներ: Ընդօրինակելով ուս ազնվականության և խոշոր բուրժուազիայի ընտանիքներում տիրող բարքերը՝ Սունդուկյանի առատրական բուրժուազիային պատկանող տիպերը ստեղծում են իրենց չորահատուկ արտահայտչական ձևը՝ ժարգոնը: Այդ ժարգոնով Սունդուկյանն ավելի է ընդգծում այն խոր դասակարգային անտազոնիզմը, որ ստեղծվել էր Անդրկովկասում XIX դարի երկրորդ կեսին աշխատավորության և շահագործող դասակարգերի միջև: Հասարակ դասի մարդիկ ժարգոնով խոսող հարուստներին ծաղրանքով անվանում էին «բոն-ժուրնիր» կամ «բոնժուր աղազաղեք»:

Թրիլիսիի հալ բարբառը թեև իր վրա կրում էր մի շարք լեզուների անջնջելի դրոշմը, բայց և այնպես նա մնում էր դարձյալ հայերեն, որովհետև այդ բարբառի քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը հայկական էին: Նեոտարար, չնայած օտար լեզուների ուժեղ ազդեցությանը, դրանով երբեք չի նսնմացել Թրիլիսիի բարբառի ինքնուրույնությունը:

Սունդուկյանը Թրիլիսիի բարբառը հասցրեց գեղարվեստական բարձր մշակման, օգտագործեց բարբառի, հալ ժողովրդի լեզվի և Անդրկովկասյան ժողովուրդների մեջ գործածվող ժողովրդական հարուստ և վառ ոճերն ու արտահայտությունները: Թրիլիսիի բարբառի մեջ մտած գրարարյան ու գրական ձևերը, վրացերեն, ադրբեջաներեն, պարսկերեն, արաբերեն, ոտուերեն և և՛լրոպական բառերը, ենթարկվելով բարբառի լեզվական ըմբռնողական ոգուն և հայերենի քերականական օրենքներին, ավելի հարստացրին և արտահայտիչ դարձրին այդ լեզուն: Սակայն որքան էլ հարուստ ու արտահայտիչ լինեի այդ լեզուն, նա ճակատագրորեն իր տեղը զիջում էր գրական լեզվին, որը հղկվում ու զարգանում էր ինտելիգենցիայի և քաղաքային հալ աշխատավորության լայն շրջաններում:

XX դարի սկզբին, արյեն, Թրիլիսիի հալ բարբառը իր անկման էր հասել: Գրական լեզվի բուռն ծաղկմամբ ու տարածմամբ Թրիլիսիի բարբառը լիովին մահացածն դատապարտվեց:

Այժմ այդ մեռած լեզվի մասին գաղափար ենք կազմում հանճարեղ Սալաթ-Նուրայի տաղերով և մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի երկերով: